

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Լիլիթ Գալստյանի, Արա Նոանյանի, Արծվիկ Մինասյանի, Արմեն Ռուստամյանի, Հրայր Կարապետյանի, Բագրատ Սարգսյանի և Արտյուշ Շահբազյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ՝

1) անհրաժեշտ է նախագծի վերնագրում «փոփոխություններ և լրացումներ» բառերը փոխարինել «փոփոխություն» բառով, քանի որ նախագծի տեքստում փոխվում է մեկ հոդված.

2) 1-ին հոդվածում «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները.

3) 1-ին հոդվածով նախատեսված 5-րդ հոդվածի՝

ա. 3-րդ մասի կապակցությամբ հայտնում ենք, որ գովազդն օտար լեզվով օգտագործելու համար որևէ օրենքով պատասխանատվություն նախատեսված չէ,

բ. 4-րդ մասի վերաբերյալ անհրաժեշտ է նկատի ունենալ այն, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ «հրապարակային գրվածք» հասկացություն նախատեսված չէ:

Նույն մասի երկրորդ պարբերությունն ըստ էության կրկնում է 4-րդ մասի առաջին պարբերության դրույթները, ինչը չի բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, որոնց համաձայն իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները,

գ. անհրաժեշտ է 5-րդ մասը խմբագրել և համապատասխանեցնել «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին: Մասնավորապես, անհրաժեշտ է «ապրանքանիշ» բառը փոխարինել «ապրանքային նշան» բառերով: Բացի դրանից, համաձայն նշված օրենքի, գրանցման ենթակա է ապրանքային նշանը և ոչ թե մակնիշը: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի ամբողջ տեքստին:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն, որ նույն մասով պարտականություն է նախատեսվում սեփականատերերի համար, մինչդեռ չի նշվում այն չկատարելու համար իրավական հետևանքը, ինչը չի բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, որոնց համաձայն

նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է կամ անընդունելի, կամ որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերին,

դ. անհրաժեշտ է 7-րդ մասում «ապրանքների» բառը փոխարինել «ապրանքային նշանների» բառերով՝ համաձայն «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների.

4) միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված նախագծի ընդունման հետ կապված այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն կառաջանա:

2. «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ՝

1) անհրաժեշտ է 1-ին հոդվածից հանել «ԳԽ, 17.04.1993» ամսաթիվը:

Նույն հոդվածում «պարբերությունից» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասից» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները.

2) 2-րդ հոդվածում «Օրենքի 1-ին հոդվածը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Օրենքը» բառով.

3) 2-րդ հոդվածով նախատեսված 1.1-ին հոդվածի՝

ա. 1-ին մասի կապակցությամբ հայտնում ենք, որ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում գործածվում է «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականություն» և ոչ թե «պետական լեզվական քաղաքականություն» հասկացությունը:

Նույն մասում հստակեցման կարիք ունի այն, թե «լեզվահարաբերությունների կարգավորման կառավարման կարգն» ում կողմից և ինչ իրավական ակտով է սահմանվում,

բ. 5-րդ մասի կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ այն, որ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում «լեզվական հարաբերություններ» հասկացություն չի գոր-

ծածվում: Բացի դրանից, պարզ չէ, թե ինչ «օրենսդրությամբ հաստատված լեզվի գործածության ձևերի» մասին է խոսքը,

զ. 9-րդ մասում պարզ չէ, թե ինչ «օգտագործման» մասին է խոսքը,

դ. 10-րդ մասի կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը «ձեռնարկություն» հասկացություն չի նախատեսում.

4) անհրաժեշտ է 3-րդ և 4-րդ հոդվածների մասերի համարակալումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին.

5) 3-րդ հոդվածում «նախադասության մեջ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «մասում» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները.

6) 4-րդ հոդվածի 1-ին կետում «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները:

Միաժամանակ հստակեցման կարիք ունի այն, թե ինչ «հաստատված լեզվական կանոնների» մասին է խոսքը, ում կողմից են դրանք հաստատվում և ինչ իրավական ակտով.

7) օրենքի նախագծում առկա են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չնախատեսված կամ հստակեցման ու պարզաբանման կարիք ունեցող հասկացություններ, մասնավորապես, «տերմինաշինություն», «լեզվաշինություն» և այլն:

3. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ՝

1) նախագծի համաձայն նախատեսվում է խստացնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք) սահմանված սանկցիաները: Այդ կապակցությամբ գտնում ենք, որ սանկցիաների խստացման հարցին կարելի է

անդրադառնալ միայն այն դեպքում, երբ կամփոփվի իրավակիրատ պրակտիկան, և արդյունքում կպարզվի, որ գործող սանկցիաները չեն ծառայում իրենց նպատակին.

2) անհրաժեշտ է 1-ին հոդվածում օրենսգրքի ընդունման ամիսը նշել տառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի պահանջների:

Նույն հոդվածում «189²» թիվն անհրաժեշտ է փոխարինել «189.2» թվով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները:

Նույն դիտողությունը վերաբերում է օրենքի նախագծի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներին:

Նույն հոդվածի 1-ին կետում «երկրորդ» բառն անհրաժեշտ է փոխարինել «առաջին» բառով, իսկ 2-րդ կետում «չորրորդ» բառը՝ «երկրորդ» բառով:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներին:

Նույն հոդվածի 2-րդ կետի կապակցությամբ հայտնում ենք, որ օրենսգրքի 189.2-րդ հոդվածի 2-րդ մասում «երեքհարյուրհիսնապատիկի» բառ նախատեսված չէ.

3) 2-րդ հոդվածի 1-ին կետի կապակցությամբ հայտնում ենք, որ օրենսգրքի 189.3-րդ հոդվածի 1-ին մասում «հարյուրհիսնապատիկի», իսկ 2-րդ մասում «երեքհարյուրհիսնապատիկի» բառեր նախատեսված չեն.

4) 4-րդ հոդվածի 1-ին կետի կապակցությամբ հայտնում ենք, որ օրենսգրքի 189.5-րդ հոդվածի 1-ին մասում «հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով» բառեր նախատեսված չեն:

Նույն հոդվածի 2-րդ կետում «երկրորդ» բառն անհրաժեշտ է փոխարինել «առաջին» բառով, քանի որ օրենսգրքի 189.5-րդ հոդվածը բաղկացած է ընդամենը մեկ մասից.

5) 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներում «պարբերությունում» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասում» բառով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ օրենքների նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի և ներկայացված տեսքով ընդունելի չէ:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մալխասյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Նախագիծ
Պ-895-07.05.2010-ԳԿ-010/0*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Գովազդի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Գովազդի մասին Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի 5-րդ հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 5. Ընդհանուր պահանջները գովազդի նկատմամբ

1. Գովազդը պետք է լինի օրինական, հավաստի եւ պատշաճ: Այն պետք է ընկալվի որպես գովազդ՝ առանց լրացուցիչ գիտելիքների եւ տեխնիկական միջոցների:

AJV-22-13 2010-06-10

2. Հայաստանի Հանրապետությունում գովազդի լեզուն գրական հայերենն է:

Գովազդի շարադրանքը պետք է ապահովի գրական հայերենի անաղարտությունը, պահպանի հայոց լեզվի ուղղագրության, ուղղախոսության, բառագիտության, տառադարձության եւ շարահյուսության կանոնները:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում միայն օտար լեզվով գովազդն արգելվում է եւ օրենքով պատժվում:

4. Գովազդատուի հայեցողությամբ, անհրաժեշտության դեպքում, գովազդի (հրապարակային գրվածքի) շարադրանքը կարող է զուգորդվել առավելագույնը երկու օտար լեզուներով, որոնց ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի հայերեն շարադրանքի ծավալը (մակերեսը) եւ չներառի տեղեկատվություն, որը ներառված չէ հայերեն շարադրանքում:

Հայերեն գովազդին (հրապարակային գրվածքին) զուգորդված մեկ օտար լեզվով գովազդի ծավալը (մակերեսը) չպետք է գերազանցի հայերեն շարադրանքի ծավալը (մակերեսը) եւ չպետք է ներառի տեղեկատվություն, որը ներառված չէ հայերեն շարադրանքում:

Գովազդի հայերեն շարադրանքը պետք է լինի օտար լեզվով շարադրանքից առաջ կամ աջ հատվածում՝ վերեւից ներքեւ կամ ձախից աջ գրությամբ:

Գովազդի օտարալեզու շարադրանքն իր պատկերային, գունային կամ լուսային լուծումներով չպետք է գերազանցի հայերեն շարադրանքը:

5. Իրենց ապրանքանիշերը (սպասարկման նշանները) եւ մակնիշերը օտար լեզվով գրանցած սեփականատերերը պարտավոր են ապահովել հայերեն գուգահեռ գովազդ՝ հայերենի տառադարձելով տվյալ ապրանքանիշի (սպասարկման նշանի) կամ մակնիշի անվանումը:

Օտար լեզվով բառային, ինչպես նաեւ պատկերով համակցված ապրանքանիշերը (սպասարկման նշաններ) եւ մակնիշերը առանձին վերցված չեն կարող օգտագործվել որպես գովազդ:

6. Հայաստանի Հանրապետության տարածքում օտար լեզուներով լույս տեսնող հրատարակություններում եւ օտար լեզվով հեռարձակվող հաղորդումներում օտար լեզվով գովազդին չզիջող ծավալով (մակերեսով) հայերեն զուգորդված շարադրանքը պարտադիր է:

7. Արտոնագրման ենթակա ապրանքների գովազդում «արտոնագրված էե հղումը պարտադիր է:

8. Արգելվում է Հայաստանի Հանրապետությունում չարտոնագրված կամ չգրանցված ապրանքանիշերի (սպասարկման նշանների) եւ մակնիշերի գովազդը:

9. Գովազդում արգելվում է ֆիզիկական անձի անվան կամ պատկերի օգտագործումն առանց վերջինիս համաձայնության:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

Նախագիծ
Պ-895՝-07.05.2010-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Լեզվի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության 1993 թվականի ապրիլի 17-ի (ԳԽ, 17.04.1993, ՇՕ-52) օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

« Հայաստանի Հանրապետությունը նպաստում է ժամանակակից գրական հայերենի կանոնարկմանը, բառակերտման, տերմինաբանության (եզրաբանության) ու տերմինաշինության (եզրաշինության), տառադարձության, ուղղագրության, ուղղախոսության եւ կետադրության կանոնարկման սկզբունքների մշակմանը:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածը լրացնել նոր 1.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 1.1 Օրենքում գործածվող հիմնական հասկացությունները

Պետական լեզվական քաղաքականություն` լեզվի բնագավառում պետության ձեռնարկած միջոցառումների ամբողջություն` ուղղված պետական լեզվի շահերի պաշտպանությանը, բոլոր ոլորտներում պետական լեզվի կենսագործունեության ապահովմանն ու զարգացմանը, լեզվավիճակի, լեզվահարաբերությունների կարգավորման կառավարման սահմանված կարգի պահպանմանը,

Պետական լեզու` ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված եւ պետության հոգածությամբ ու հովանավորությամբ երկրի տարածքում գերակայություն ունեցող լեզու,

Պաշտոնական լեզու` հայոց լեզվի քերականության, բառապաշարի, արտասանության որոշակի կանոնների ենթարկվող, հասարակության գրական ու գիտական պահանջներին ծառայող լեզու,

Լեզվավիճակ` համաժամանակյա կտրվածքով ներկայացվող լեզվական իրողություններ, զարգացման միտումներ եւ երեւոյթներ,

Լեզվական հարաբերություններ` պետական լեզվի գործառույթներով պայմանավորված եւ օրենսդրությամբ հաստատված պետական լեզվի գործածության ձեւեր, որոնք իրականացվում են պետության ներսում եւ այլ պետությունների ու միջազգային կառույցների միջեւ առկա փոխհարաբերություններում,

Գրական հայերենի կանոնարկում` լեզվի հիմնական քերականական օրենքների, տերմինաշինության եւ լեզվաշինության միջոցով բառապաշարի հարստացման եւ քերականական նոր կանոնների ստեղծման գործընթաց,

Լեզվական իրավունք` քաղաքացու, հանրության, պետական կամ հասարակական կառույցների լեզվական գործառնության նկատմամբ պետության կողմից սահմանված իրավունքներ,

Լեզվական պարտականություն` ՀՀ քաղաքացիների եւ հաստատությունների կողմից հանրային կյանքի բոլոր ոլորտներում լեզվական քաղաքականությունից եւ լեզվական հարաբերություններից բխող սկզբունքների պահպանումը,

Գործավարություն` փաստաթղթերի ստեղծման, ձեւավորման, շրջանառության ապահովման եւ պահպանման գործընթաց, որը ներառում է կազմակերպակարգադրական (կառավարման եւ վարչական աշխատանքի կազմակերպումն ապահովող), անհատական, նորմատիվ, տեխնիկական, գիտատեխնիկական, նախագծահաշվային, ուսումնամեթոդական, ֆինանսահաշվապահական, գործարքային, հաշվետու-վիճակագրական, առեւտրային, տեղեկատվական, բացատրական, հրահանգային (օգտագործման կամ շահագործման հրահանգներ, տեխնիկական անձնագրեր, մակնշում, ապրանքապիտակներ, գնապիտակներ, անդորրագրեր), տեխնոլոգիական, նամակագրական-թղթակցային, փաստաթղթերի ստեղծումը եւ (կամ) ձեւավորումը, շրջանառության ապահովումն ու պահպանումը:

Պետական վերահսկողության ենթակա փաստաթուղթ` պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների գործունեությանն առնչվող փաստաթուղթ:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածում կատարել հետևյալ լրացումները.

- 1) առաջին նախադասության մեջ «տիրապետել է բառից հետո լրացնել «գրական է բառը,
- 2) երկրորդ նախադասության մեջ «լեզուն է բառից հետո լրացնել «գրական է բառը,
- 3) երրորդ նախադասության մեջ «ապահովել է բառից հետո լրացնել «գրական հայոց է բառերը:

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածի՝

- 1) ա) կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, հաստատված լեզվական կանոնները:

- 2) բ) կետում «միջոցառումների է բառից հետո լրացնել «հեռուստառադիոհաղորդումների է բառը,

- գ) կետում «ծրարները է բառից հետո լրացնել «գովազդի բոլոր միջոցները է բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

Նախագիծ
Պ-895²-07.05.2010-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (ԳՆ 06.12.1985) (այսուհետև՝ Օրենսգիրք) 1892 հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) երկրորդ պարբերությունում «ութունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով է բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի չափով է բառերով, իսկ «հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով է բառերը փոխարինել «երկուհարյուրհիսնապատիկից երեքհարյուրապատիկի չափով է բառերով,

- 2) չորրորդ պարբերությունում «հարյուրքսնապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով է բառերը փոխարինել «երեքհարյուրապատիկից մինչև երեքհարյուրհիսնապատիկի չափով է բառերով, իսկ «երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրհիսնապատիկի չափով է բառերը փոխարինել «երեքհարյուրհիսնապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով է բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 1893 հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) երկրորդ պարբերությունում «հիսնապատիկից մինչև ութսունապատիկի չափով է բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով է բառերով, իսկ «հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով է բառերը փոխարինել «երեքհարյուրապատիկից երեքհարյուրհիսնապատիկի չափով է բառերով,

- 2) չորրորդ պարբերությունում «ութունապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով է բառերը փոխարինել «երեքհարյուրապատիկից մինչև երեքհարյուրհիսնապատիկի չափով է բառերով, իսկ «երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրհիսնապատիկի չափով է բառերը փոխարինել «երեքհարյուրհիսնապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով է բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 1894 հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) երկրորդ պարբերությունում «հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով բառերը փոխարինել «հարյուրհիսնապատիկից երկուհարյուրապատիկի չափով բառերով, իսկ «ութսունապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով բառերով,

2) չորրորդ պարբերությունում «հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով բառերը փոխարինել «երկուհարյուրհիսնապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով բառերով, իսկ «հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով բառերը փոխարինել «երեքհարյուրապատիկից մինչև երեքհարյուրհիսնապատիկի չափով բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 189⁵ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) առաջին պարբերությունում «հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով բառերով,

2) երկրորդ պարբերությունում «երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով բառերը փոխարինել «հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

ՕՐԻՆԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ազգապահպանության գլխավոր երաշխիքներից մեկը մեր մայրենի լեզուն է՝ հայերենը, որի պահպանությունը և պաշտպանությունը օրենսդրական կարելորագույն խնդիր է: 1993թ. ընդունված «Լեզվի մասին» ՀՀ օրենքը, 2002թ. ՀՀ կառավարության հաստատված «Հայաստանի Հանրապետությունում լեզվական քաղաքականության պետական ծրագիրը և մի շարք իրավական ակտեր ուղղված են հայերենի կանոնակարգմանը, պետական լեզվական քաղաքականության արդյունավետ կիրառմանը:

Այնուամենայնիվ, հասարական կյանքի տարբեր ոլորտներում, զանգվածային լրատվամիջոցներում, գովազդում, պաշտոնական խոսքում քիչ չեն դեպքերը, երբ աղավաղվում, խաթարվում է գրական հայերենը: Ոճական, ուղղախոսական, քերականական սխալները դարձել են համատարած երեւոյթ, իսկ ժարգոնը և փողոցի լեզուն հեռուստագովազդի և հեռուստատեսի տեսիլի անբաժան մասն են:

Մայրաքաղաքի և հանրապետության համայնքներում, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի համատարած խախտումով (ՀՀ-ում գովազդի լեզուն հայերենն է), ճնշող մեծամասնություն են կազմում օտարալեզու հրապարակային գրվածքները, վահանակները, ցուցանակները, հայտարարությունները: Ոտնահարվում են նաև հայերենով տեղեկատվություն ստանալու սպառողների իրավունքները: Հայերենի պաշտպանվածության ներկա իրավիճակը օրենսդրական բարեփոխման խնդիր է առաջացնում:

Լեզվի տեսչության վերջին տարիների ստուգումները փաստում են, որ իրավախախտումների թիվն աճելու միտում ունի. անգամ կրկնակի ստուգումների ընթացքում վարչական իրավախախտումները չեն վերացվում՝ «Գովազդի մասին» օրենքի 5-րդ հոդվածի տարաբնույթ մեկնաբանությունների պատճառով:

2010 թվականի սկզբում մշտադիտարկումների արդյունքում միայն մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում արձանագրվել է հրապարակային գրվածքների, ցուցանակների, գովազդային վահանակների և գովազդային ցուցանակների լեզվական ձեւավորման շուրջ 500 խախտում, որոնց վերացման համար առկա օրենսդրական դաշտի պայմաններում կպահանջվի առնվազն 10 տարի:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքում գովազդի նկատմամբ ընդհանուր պահանջների ընդլայնումով (Հոդված 5) ու հստակ պարտականությունների սահմանումով վստահ ենք, որ օրենսդրական դաշտում դրական քայլ կապահովենք լեզվական հարաբերությունների կարգավորման և հայերենի պաշտպանության ուղղությամբ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները գործող տույժերից ավելի բարձր տույժեր են սահմանում լեզվի բնագավառում օրենսդրության խախտման համար, ինչը կարծում ենք կնպաստի քաղաքացիների և պաշտոնական անձանց պատասխանատվության բարձրացմանը:

Օրենդրական նախաձեռնության փաթեթի մաս է կազմում նաև «Լեզվի մասին ՀՀ օրենքում լրացումների նախաձեռնությունը, որը եւս ուղղված է գրական հայերենի պաշտպանվածության ամրապնդմանը:

Օրենսդրական նախաձեռնությունը մշակելիս նկատի ենք ունեցել ԱՊՀ մի շարք երկրների իրավական փորձը: